ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

28.05.2025

<<Հարգելի՛ հայրենակիցներ,
Շնորհավորում եմ ձեզ մայիսի 28-ի՝ Հայաստանի Առաջին Հանրապետության օրվա կապակցությամբ:
Մայիսի 28-ը մեր պատմության փառավոր էջերից է: Այս օրը՝ 1918 թվականին, ծնվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը՝ ազատության ու ինքնիշխանության համար մեր ժողովրդի անսասան կամքի արդյունքը:
Չնայած իր կարճատև գոյությանը՝ Առաջին Հանրապետությունը հիմնեց այն արժեքները, որոնց վրա այսօր կառուցվում է մեր անկախ պետականությունը՝ ժողովրդավարություն և ինքնիշխանություն:
Առաջին Հանրապետության հիմնադիրներն իրենց անձնական նվիրվածությամբ և հերոսական պայքարով մեզ փոխանցեցին անկախության, համախմբվածության և պայքարի ոգին: Նրանց թողած ժառանգությունը շարունակվում է այսօր՝ մեր պետականության ամրապնդման, խաղաղության և զարգացման ուղին հարթելով:
Այսօր, ապրելով արդեն անկախ Հանրապետության պայմաններում, մենք պարտավոր ենք արժանապատվորեն շարունակել այդ սրբազան գործը՝ կերտել արդար, ուժեղ ու զարգացած Հայաստան:
Մեր պետության ամրապնդման, անկախության պահպանման և ազգային իդեալների իրագործման ճանապարհը անցնում է միասնական կամքի, քաղաքացիական գիտակցության և նվիրվածության միջով:
Թո՛ղ մայիսի 28-ը մեզ միավորի ոչ միայն որպես հիշողություն անցյալի մասին, այլ որպես ապագայի կերտման կոչ՝ հիմնված մեր ազգային արժեհամակարգի, համախմբվածության և նպատակասլացության վրա:
Շնորհավոր տոնդ, Հայա՛ստան>>: